600.0065.26.03.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2019 թվականի №65Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի №127Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և հաշվի առնելով «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի մարտի 7-ի դիմումը և մարտի 18-ի №498 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 9-ի «ԱԱՏՎՔ» փակ բաժնետիրական ընկերության թույլտվությունները վերաձևակերպելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 4-ի №14Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №354Ա որոշմամբ Ընկերության անվամբ վերաձևակերպված «ԱԱՏՎՔ» փակ բաժնետիրական ընկերությանը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի մարտի 26-ի «ԱԱՏՎՔ» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №127Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №0535 թույլտվության գործողության ժամկետը՝ Որոշման 1-ին կետում «10 տարի» և 2-րդ կետում

«մինչև 2019 թվականի մարտի 26-ը» բառերը փոխարինել «մինչև 2023 թվականի նոյեմբերի 19-ը» բառերով, իսկ Որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Կարգավորվող անձը պարտավոր է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի համաձայն՝ օրենքով սահմանված չափով վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման վճարները՝ հետագա փոփոխություններով հանդերձ:»:

2. Ընկերությանն՝ ընդունել ի գիտություն, որ հաշվի առնելով լայնաշերտ կապի նոր տեխնոլոգիաների ներդրման համար 2500-2690ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործման միջազգային միտումներն ու նշված տիրույթի գրավչությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ նախատեսում է վերանայել օրենքով 2500-2690ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման համար սահմանված պարտադիր վճարների չափերը՝ չպայմանավորելով դրանք ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործման տեխնոլոգիաներով, նպատակներով և աշխարհագրական տարածքներով՝ բյուջետային գործընթացի համար սահմանված ժամկետներում նախապես ծանուցելով Ընկերությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մարտի 26-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
26 մարտի 2019թ.